խա.

Խնդրէ անդօն վարդապետն մալաբարտեան, զի իբրև զմի ի մէնջ ճանաչիցի եղբայր մեր, որպէս զԽաչատուր վարդապետն ճանաչի, և աղօթիցս մերոց մասնակից լինիցի։ (Հ. Պ[ողոս] վարդապետ առ Մխիթար, յամի 1735 և. սեպ. 25. [Կ. Պոլիս])։

խբ.

Զարևելէ այսպէս լուաք, զի կարմիր գլուխն ըզդարս առեալ իցէ, և զէրզրում պաշարեալ՝ զմարդիս տեղեացն այնոցիկ, որք ռայէք էին օսմանցոց, յղեալ են յէջմիածին, և ըստ խորհրդոյ դալֆային տալ նոցա զտեղ և զերկիր, առանց պահանջելոյ ի նոցունց այսքան ամ զհարկ վարել և ցանել զերկիր, և զերկիրն չէն առնել։ (Հ. Պ[ողոս] վարդապետ առ Մխիթար, յամի 1735 և. սեպտ. 24 (ի տան վրդանեսանց). [Կ. Պոլիս])։

խգ.

Եկն լուր փօթաւոր ի յարևելից, որ էր այս, այսինքն կարմիր գլուխն զօրսն օսմանցւոց հնարիւք քարշեալ է ի յայնպիսի տեղի՝ յորմէ տեղւոջէ ի յեօթն փաշայից երկուքն և 180 հազարաց զինուորաց 10 զհազարն հազիւ զերծեցեալք են, առանց կահի և կարասի և զինու, և մնացեալքն ի տապաստի անկեալք են։ Եւ այս լուրս մինչ եկն ի ստամպօլ ի միւսում աւուր քշեցեալ եղև մատնին...։ Վասն էրզրումայ ասեն թէ փախուցեալք փաշայքն ի կարմիր գլխոյ եկեալք ի յէրզրում ժողովեալք են. մտեալք ի բերդն և երեք խէնտէկ փորեալք են շուրջ զբերդիւ։ (Հ. Պ[ողոս] վարդապետ առ Մխիթար, յամի 1735 և. յուլիսի 27 (ի տան եզական բարեկամին). [Կ. Պոլիս])։

խդ.

Վասն էրզրումայ լուայ, զի տաճկունքն մտեալք են ի բերդն և զռայէսն ի գիւղօրէնսն յղեալ են. և կարմիր գլուխն եկեալ զայնոսիկ զամենայն քշեալ տարեալ է ի յէջմիածին, և անդ ցրուեալ է զնոսա ի գիւղօրէս առ ի գործել զերկիր, և քան մի ամ ոչ գիտեմ, որպէս ասացին, ոչ տալ նոքա տասանորդ երկրին ումեք, և զայս պատուէր հայոց կաթուղիկոսին է տուեալ սերազգեր կարմիր գլխոյն։ (Հ. Պողոս վարդապետ առ Մխիթար, յամին 1735 օգոստոսի 13 (ի տան եզական բարեկամին. [Կ. Պոլիս])։

խե.

Եկն առ իս հրամանուցդ աւետեաց գիրն ի կողմանէ մինաս եպիսկոպոսին զալն, յոյժ ուրախացայ որ է մեզ վաղեմի բարեկամ, յառաջին անգամն հոսմայու դառնալն եկն ի յեգիպտոս, նոյնժամայն ծանօթացանք. ևս եղբորս է ծանօթ և բարեկամ։ (Սուրբիան եպս. առ Մխիթար, յամի 1736 սեպտ.ի ԻԲ. [Հռոմ])։

խզ.

Անցելում ամի որքան ահ և երկիւղ կրեցաք վասն պատերազմին պարսից, զի մերձեցաւ որ պաշարէին Էրզրում։ Բայց այսմ ամի դժուարագոյն եղև քան զանցեալն, զի հասարակ քաղաքիս